որոշելիս դատարանը հիմք է ընդունում ծախսերի ողջամիտ չափը, որը որոշվում է՝ ելնելով փաստաբանի կատարած աշխատանքի ծավալից, գործի բարդությունից, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի կողմից սահմանված փաստաբանական գործունեության վճարների միջին գնացուցակից, ինչպես նաև դատական ակտով բռնագանձման ենթակա գումարի և պահանջվող փաստաբանական վճարի չափերի հարաբերակցությունից:

Ելնելով վերը նշված չափանիշներից և նկատի ունենալով, որ ՀՎԻ ԷՍ ՏԻ ՍՔԱՅ ՍՊ ընկերության և Վարդան Ղաջոյան ՍՊ ընկերության միջև 20.05.2025 թվականին կնքված թիվ փաստաբանական ծառայությունների մատուցման մասին պայմանագրի 3.1 կետի համաձայն՝ սույն պայմանագրով մատուցվող ծառայությունների արժեքը սահմանվում է 600.000 ՀՀ դրամ, ինչպես նաև հաշվի առնելով փաստաբանի կատարած աշխատանքի ծավալը (ապացույցներ հավաքելու և ներկայացնելու անհրաժեշտությունն ու այդ գործողությունները փաստացի կատարելու հանգամանքը), գործի բարդությունը (վիճելի իրավահարաբերության բնույթը), Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի կողմից սահմանված փաստաբանական գործունեության վճարների միջին գնացուցակը, Դատարանը փաստաբանի վարձատրության գումարի բռնագանձման մասով գալիս է այն եզրահանգման, որ սահմանված փաստաբանի վարձատրության չափը նշված գործով ողջամիտ և խելամիտ չէ: Դատարանը փաստաբանի վարձատրության գումարի բռնագանձման մասով գտնում է, որ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության չափ պետք է դիտել 200.000 ՀՀ դրամը, որը նման պայմաններում ենթակա է բռնագանձման պատասխանողից հօգուտ հայցվորի, իսկ դատական ծախսերի հարցը մնացած մասով պետք է համարել լուծված:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 234.5-րդ, 234.12-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ

Ե Ց

1. ՀՎԻ ԷՍ ՏԻ ՍՔԱՅ ՍՊ ընկերության հայցն ընդդեմ Կոտայքի և Գեղարքունիքի ԿԿԹԿ ՍՊ ընկերության՝ թիվ ԿԳԿԿԹԿ-ԳՀԱՊՁԲ-08/25 ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրություն անվավեր ճանաչելու և հայտում թերությունները շտկելու համար ՀՎԻ ԷՍ ՏԻ ՍՔԱՅ ՍՊ ընկերությանը մեկ աշխատանքային օր տրամադրելուն պարտավորեցնելու պահանջների մասին, բավարարել մասնակիորեն.

1.1. Անվավեր ճանաչել թիվ ԿԳԿԿԹԿ-ԳՀԱՊՁԲ-08/25 ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրությունը:

2. Հայցը՝ մնացած մասով, մերժել:

3. Կոտայքի և Գեղարքունիքի ԿԿԹԿ ՍՊ ընկերությունից հօգուտ ՀՎԻ ԷՍ ՏԻ ՍՔԱՅ ՍՊ ընկերության բռնագանձել 50.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար, 200.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատվության գումար:

4. Դատական ծախսերի հարցը՝ մնացած մասով, համարել լուծված:

5. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել Վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Աննա Շիլաջյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am